ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՍՄԿԿ XXVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

ՍՄԿԿ XXVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

ԲԱԳՐԱՏ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Ժամանակակից համաշխարհային հասարակական զարգացումը տեղի է ունենում ռեալ սոցիալիզմի վճռորոշ ազդեցության պայմաններում։ Դրա ակնառու վկայությունը դարձավ ՍՄԿԿ XXVI համագումարը՝ մեր օրերի խոշորագույն քաղաքական իրադարձությունը։ Համագումարի որոշումները կանխագծում են առաջիկա տասնամյակում սովետական հասարակության հետագա առաջընթացի գիտականորեն հիմնավորված հեռանկարները, նշում մարդկության համար կենսական նշանակություն ունեցող միջազգային կարևորագույն պրոբլեմների լուծման ռեալիստական ուղիները։

ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցումը, որով համագումարում հանդես եկավ Լ. Ի. Բրեժնևը, լուրջ ներդրում է մարքս-լենինյան տեսության մեջ։ Այն արդիականության սոցիալ-տնտեսական, քաղաքական-գաղափարախոսական պրոցեսների զարգացման հիմնական պրոբլեմների՝ տեսական վերլուծության խորությամբ ու մասշտաբայնությամբ ակնառու փաստաթուղթ է, որտեղ բազմակողմանիորեն մշակված են զարգացած սոցիալիստական հասարակության նյութական, քաղաքական ու հոգևոր հիմքերի ամրապնդման գլխավոր ուղղությունները։

ՍՄԿԿ XXVI համագումարի համար ամենաբնորոշը հոգատարությունն էր մարդու նկատմամբ, քանի որ այնտեղ համակողմանիորեն քննարկվեցին սովետական մարդու նյութական բարեկեցության, նրա հոգևոր աճի, ներդաշնակ զարգացման հետ կապված հարցերը, այն երաշխիքները, որոնք զարգացած սոցիալիզմն ընձեռում է կոմունիստական շինարարության ամենաբարդ խնդրի՝ նոր մարդու ձևավորման լուծման համար։ Վերջիններս արտահայտվեցին համագումարի փաստաթղթերում։

Սակայն նոր մարդու ձևավորումն անհնար է պատկերացնել առանց գաղափարախոսական, քաղաքական-դաստիարակչական ակտիվ գործունեության, առանց զարգացող պրակտիկայի հետ վերջինիս սերտ կապի։ Այժմ առավել, քան երբևէ անհնար է ձևավորել մարդկանց սոցիալիստական գիտակցությունը՝ առանց բուրժուական գաղափարախոսության դեմ հետևողական, հարձակողական պայքար մղելու, առանց այդ պայքարի ժամանակակից ուղղությունների ու պրոբլեմների հստակ պատկերացման։ «Հարցը,— գրում էր Վ. Ի. Լենինը,— դրվում է միայն այսպես. բուրժուական թե սոցիալիստական գաղափարախոսություն։ Միջինը չկա այստեղ։ Ուստի սոցիալիստական գաղափարախոսության ամեն մի նսեմացում, ամեն մի հեռացում նրանից՝ ինք-

նին նշանակում է բուրժուական գաղափարախոսության ուժեղացում»[1]։ Ընդսմին, Վ. Ի. Լենինը նշում էր, որ կապիտալիստների դիմադրության ձևերից ամենախորն ու ամենահզորը գաղափարականն է[2]։ Եվ պատահական չէ, որ ՍՄԿԿ XXVI համագումարում կարևոր տեղ հատկացվեց հակադիր սոցիալական սիստեմների միջև մղվող և գնալով սրվող գաղափարախոսական պայքարի հարցերին։ Ահա թե ինչու ՍՄԿԿ Կենտկոմի 1979 թ. ապրիլի 26-ի «Գաղափարախոսական, քաղաքական-դաստիարակչական աշխատանքի հետագա բարելավման մասին» որոշումը, որում հանգամանորեն քննարկվել են այդ հարցերը, համագումարում որակվեց որպես «երկարատև գործողության փաստաթուղթ»[3]։

Արդի համաշխարհային հասարակական զարգացումը չափազանց բարդ ու դիալեկտիկորեն հակասական պրոցեսների հանրագումար է, որի մեջ կարելի է ընդգծել երկու էական միտում։ Մի կողմից, գնալով ավելի են ամրապնդվում ռեալ սոցիալիզմի դիրքերը, ամբողջ հետպատերազմյան ժամանակաշրջանի համար աննախադեպ թափ են ստացել կապիտալիստական երկրներում բանվոր դասակարգի պայքարը հանուն իր իրավունքների և Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները։ Աճում է համաշխարհային կոմունիստական շարժման, լենինիզմի դերն աշխարհում։ Շնորհիվ ռեալ սոցիալիզմի և, ամենից առաջ, Սովետական Միության տնտեսական ու պաշտպանական հզորության, միջազգային-քաղաքական ակտիվության ու հեղինակության աճի անկասելիորեն զարգանում է հեղափոխական պրոցեսը, որի գլխավոր բովանդակությունն աշխատավորական բազմամիլիոն զանգվածների պայքարն է խաղաղության, դեմոկրատիայի, սոցիալական առաջադիմության համար, ճնշման ու շահագործման, աղետների դեմ, որոնց աշխատավորներին դատապարտում է իմպերիալիզմը՝ սպառազինությունների մրցավազքի, ինֆլյացիայի, գործազրկության, ժողովուրդների սուվերեն իրավունքների ոտնահարման հետևանքով։ Մյուս կողմից, վտանգավոր կերպով աճում է իմպերիալիստական ագրեսիվ շրջանների ձգտումը՝ խոչընդոտել առաջադիմական պրոցեսների ծավալմանը։ Ակտիվանում են համաշխարհային հետադիմականության, գլխավորապես ԱՄՆ-ի, առավել ռազմատենչ այն ուժերը, որոնց նպատակն է վերածնել «սառը պատերազմը», պատնեշ կանգնեցնել ծավալվող առաջադիմական փոփոխությունների ճանապարհին, իրենց վերադարձնել ժողովուրդների բախտը տնօրինողի դերը։ Դրանք են այն հիմնական գործոնները, որոնք պայմանավորում են սոցիալիզմի ու կապիտալիզմի, կոմունիզմի ու հակակոմունիզմի միջև մղվող արդի գաղափարախոսական պայքարի՝ որպես դասակարգային պայքարի պատմականորեն առաջին պլան մղվող ձևի սրումն ու բարդացումը։ Ահա թե ինչու կուսակցության XXVI համագումարին ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցման մեջ՝ Լ. Ի. Բրեժնևը նշեց. «Փաստ է նաև գաղափարախոսական պայքարի նկատելի սրումը։ Արևմուտքի համար այն չի հանգում գաղափար-

---

1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 6, էջ 49—50։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 464։

3 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, Երևան, 1981, էջ 125։

ների հակամարտության։ Նա գործի է դնում միջոցների մի ամբողջ սիստեմ, որոնց նպատակն է քայքայել սոցիալիստական աշխարհը, խարխլել այն։

Իմպերիալիստները և նրանց կամակատարները սիստեմատիկաբար թշնամական կամպանիաներ են մղում սոցիալիստական երկրների դեմ։ Նրանք արատավորում և խեղաթյուրում են այն ամենը, ինչ տեղի է ունենում այդ երկրներում։ Նրանց համար ամենագլխավորն է՝ մարդկանց ետ վանել սոցիալիզմից»[4]։

Նախքան սրդի գաղափարախոսական պայքարի հիմնական պրոբլեմներին անցնելը, անհրաժեշտ է կանգ առնել «հոգեբանական պատերազմ» և «գաղափարախոսական դիվերսիա» հասկացությունների վրա՝ ընդհանուր գծերով։

Ներկայիս գաղափարախոսական պայքարում հակակոմունիզմի գլխավոր զենքը «հոգեբանական պատերազմն» ու գաղափարախոսական դիվերսիաներն են՝ ուղղված մարքս-լենինյան տեսության ու ռեալ սոցիալիզմի պրակտիկայի դեմ։ Դրանք բուրժուական գաղափարախոսության ողջ համակարգի խոր ճգնաժամի արդյունք են՝ պայմանավորված այդ գաղափարախոսության հետադիմական մղումներով, աշխատավորների կենսական շահերին, սոցիալական առաջադիմությանը դրանց անհարիր լինելով։ Այդ գաղափարախոսության ճգնաժամի խորացման և հետադիմական միտումների ուժեղացման կարևորագույն դրսևորումներից մեկն էլ այն է, որ ժամանակակից բուրժուազիան գնալով ավելի ու ավելի է հրաժարվում տեսական գաղափարների, կոնցեպցիաների բացահայտ ու ալնիվ առճակատումից՝ իր ուշադրությունը կենտրոնացնելով գլխավորապես «հոգեբանական պատերազմին» հատուկ պրակտիկ պրոպագանդիստական այն միջոցառումների վրա, որոնք ապահովում են իմպերիալիզմի ընթացիկ քաղաքական տակտիկան։ Այդ հանգամանքն ակնհայտորեն դրսևորվեց 1970-ական թվականներին, երբ մարքս-լենինյան տեսությանն ուղղակիորեն հակադրվող և լայնորեն պրոպագանդվող բուրժուական նորագույն սոցիոլոգիական տեսություններն ու ֆուտուրոլոգիական կոնցեպցիաները փոխարինվեցին սկզբում «մարդու իրավունքների պաշտպանության» լոզունգի տակ մղվող երկերեսանի պրոպագանդիստական կամպանիայով, իսկ ապա՝ «միջազգային տեռորիզմի» մասին է՛լ ավելի երկերեսանի ու ստահոդ վարկածով. վարկած, որն ազգային-ազատագրական շարժումներն ու Սովետական Միության կողմից դրանց պաշտպանությունը որակում է որպես «տեռորիզմ»[5]։

Գաղափարախոսական դիվերսիան միջազգային ասպարեզում մղվող գաղափարախոսական պայքարի հակակոմունիզմին հատուկ ձև է և մղվում է «հոգեբանական պատերազմի» շրջանակներում։ Այն քայքայիչ պրոպագանդա է, որն իրականացվում է իմպերիալիստական պետությունների ռադիոյով, հեռուստատեսությամբ, մամուլով՝ սոցիալիստական երկրների դեմ ուղղված զրպարտչական ու պրովոկացիոն բնույթի ինֆորմացիա տարածելու միջոցով[6]։ Գաղափարախոսական դիվերսիային բնորոշ են ոչ թե գաղափարատեսական բանավեճին հատուկ մեթոդները, այլ, ինչպես խոստովանում է պրոպագան-

---

4 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, էջ 18։

5 «Правда», 13. II. 1981.

6 Н. М. Кейзеров, Идеологические диверсии, М., 1979.

դայի ամերիկյան «տեսարան» Բ. Մերթին, «մարդկանց դիտակցության մեջ շրջապատող իրականության վերաբերյալ կեղծ պատկերներ ձևավորելու միտումները»[7]։

«Հոգեբանական պատերազմը» բուրժուական գաղափարախոսներն ըմբռնում են որպես կապիտալիստական պետությունների հետախուզական ծառայությունների, գաղափարախոսական ու քաղաքական հաստատությունների կողմից իրականացվող միջոցառումների մի այնպիսի համակարգ, որը նպատակ է հետապնդում բարոյալքել հակառակորդին, քայքայիչ ազդեցություն գործել մարդկանց հոգեբանության, մտածելակերպի ու վարքի վրա։ Ընդ որում, ցանկացած միջոցառման պլանավորման դեպքում, լինի դա քաղաքական, տնտեսական, թե բուն գաղափարախոսական բնույթի՝ վերոհիշյալ մոմենտներն անպայմանորեն ուշադրության կենտրոնում են գտնվում։ «Հոգեբանական պատերազմի» ձևերն ու մեթոդները մտածվում են այնպես, որ որոշակի ազդեցություն գործեն անհատի հոգեբանական կառուցվածքի վրա, օգտագործվեն բոլոր այն միջոցները, որոնք ձևավորում են որոշակի ապրելակերպ, դաստիարակություն, մտածելակերպ, տրամադրություններ և այլն։ Ընդսմին, ցանկալի նպատակին հասնելու համար մեքենայությունների առարկա են դառնում գոյություն ունեցող սովորույթները, նախապաշարմունքներն ու ստերեոտիպերը։ Բուրժուական գաղափարախոսները փորձում են նաև կանխատեսել, թե առանձին մարդիկ ու սոցիալական խմբերն ինչպիսի ռեակցիա կցուցաբերեն կոնկրետ կենսական իրադրությունների նկատմամբ։

Պատահական չէ այն սերտ կապն ու ընդհանրությունը, որ կա ժամանակակից ամերիկյան իմպերիալիզմի ու գերմանական ֆաշիզմի գաղափարախոսական-պրոպագանդիստական համակարգերի միջև։ Այդ է վկայում պրոպագանդայի ամերիկյան տեսաբան Լ. Ֆարագոյի խմբագրությամբ դեռևս 1941 թ. լույս տեսած «Գերմանական հոգեբանական պատերազմը» խորագրով ժողովածուն[8]։ Հետագայում, հատկապես ՍՍՀՄ-ի և մյուս սոցիալիստական երկրների դեմ մղվող «սառը պատերազմի» տարիներին, գերելյան այդ փորձը յուրովի «զարգացվեց» ամերիկյան իմպերիալիստների կողմից։

Ռեալ սոցիալիզմի դեմ մղվող «հոգեբանական պատերազմի», գաղափարախոսական դիվերսիաների գլխավոր ուղղությունն այժմ, ինչպես վերը նշվեց, «միջազգային տեռորիզմի» վերաբերյալ վարկածի պրոպագանդան է՝ սերտորեն կապված «սովետական սպառնալիքի» վերաբերյալ առասպելի աննախադեպ ուռճացման հետ։ Հայտնի հակակոմունիստ՝ «պրոֆեսոր» Ռ. Փայփսի կողմից կյանքի կոչված այդ կոնցեպցիան[9] ներկայումս փոխարինել է «մարդու իրավունքների պաշտպանության» վարկաբեկված լոզունգին։

Հարց է ծագում. ո՞րն է ամերիկյան իմպերիալիզմի գաղափարախոսական այս կերպարանափոխության պատճառը, ինչի՞ են ձգտում դրա հեղինակները։

Հայտնի է, որ քաղաքական տակտիկան հետապնդելով ավելի նեղ նպատակներ և կոչված լինելով սպասարկելու իմպերիալիստների ընթացիկ քաղաքական պահանջմունքները, զգալիորեն ստվերում է նրանց ընդհանուր ստրատեգիան։ Այն ստիպված է հարմարվելու սոցիալ-քաղաքական իրադրու-

[7] B. S. Murty, Propaganda and World Public Order. The legal Regulation of the ideological instrument of Coercion, New Haven and London, 1968, p. 61.

[8] German psychological warfare. (Ed. by Farago L.), N. Y., 1941.

[9] «Правда», 18. II. 1981.

թյան մեջ տեղի ունեցող ընթացիկ փոփոխություններին։ Հակակոմունիզմի գաղափարախոսական ստրատեգիան ենթարկվում է ռազմաարդյունաբերական համալիրի քաղաքական ստրատեգիային, տվյալ փուլում՝ այնպիսի քաղաքական կուրսի, որը ձգտում է վերծեցնել միջազգային լարվածության թուլացման պրոցեսը, խթանել սպառազինությունների մրցավազքը։ Հենց դրանով էլ բացատրվում է այն հանգամանքը, որ վերջին տարիներին նկատելիորեն ուժեղացել են սովետական հասարակարգը, ՍՄԿԿ ներքին ու արտաքին քաղաքականությունը վարկաբեկելու իմպերիալիստական փորձերը։ Այսպես կոչված «ազատ աշխարհի», դեմոկրատիայի ու խաղաղության պաշտպանության մասին հայտարարությունների քողի տակ փաստորեն հիմնավորվում է ռեալ սոցիալիզմի հետ ռազմաքաղաքական առճակատման միտումը։ Հենց այդ պատճառով է, որ գաղափարախոսական պայքարի առաջին պլան է մղում պատերազմի և խաղաղության պրոբլեմը՝ արդիականության հիմնական, հակադիր հասարակական սիստեմների միջև հարաբերությունների գլխավոր քաղաքական խնդիրը։

Ամերիկյան նոր վարչակազմը կոնգրեսից պահանջել է 1981 ֆինանսական տարում ռազմական ծախսերի համար հատկացնել 178 մլդ դոլար և մտադիր է 1982 թվականին այդ գումարը հասցնել ռազմական բյուջեների պատմության մեջ ընդհանրապես աննախադեպ մի աստղաբաշխական թվի՝ 226 միլիարդի։ Այդ հսկայական միջոցների մեծ մասը հատկացվում է ստրատեգիական միջուկային զենքի նոր տեսակների առավել արագ զարգացմանը։ Միաժամանակ ինտենսիվ կերպով մշակվում են մոտ 450 ռազմական նոր ծրագրեր, որոնք նպատակ են հետապնդում արդեն 1980-ական թվականների վերջերին ուժերի գոյություն ունեցող հավասարակշռությունը փոխել հօգուտ իմպերիալիզմի[10]։ Իսկ եթե դա էլ չհաջողվի, ինչպես հայտարարել է ամերիկյան ծայրահեղականների լիդերներից Բ. Գոլդուոտերը, ավելի լավ է «այն աշխարհն ուղարկել ամբողջ աշխարհը, քան թողնել նրան ապրելու կոմունիզմի հաղթանակի պայմաններում»[11]։ Միաժամանակ, իմպերիալիզմի պրոպագանդիստական ողջ զինանոցն ի սպաս է դրվել «սովետական սպառնալիքի մասին» առասպելի ուռճացմանը, խաղաղության գործի համար վտանգավոր այնպիսի դոկտրինաների պրոպագանդմանը, որոնցից է, օրինակ, «սահմանափակ ջերմամիջուկային պատերազմի» խելացնոր կոնցեպցիան, որն ի դեպ 1960-ական թվականների սկզբին առաջադրել է ամերիկյան ծայրահեղականների գաղափարախոս սոցիոլոգ Հ. Կանը[12]։

Այդ և նման դոկտրինաները հատուկ տեղ են գրավում «հոգեբանական պատերազմի» համակարգում և կոչված են մշակելու-նախապատրաստելու հասարակական կարծիքը սպառազինությունների պլանավորվող մրցավազքի որակապես նոր փուլի համար։ «Մարդկանց ուզում են ներշնչել,— նշեց Լ. Ի. Բրեժնևը ՍՄԿԿ XXVI համագումարում,— թե իբր միջուկային պատերազմը կարող է սահմանափակ լինել։ Ուզում են նրանց հաշտեցնել այդպիսի պատերազմի թույլատրելիության մտքի հետ։

---

10 Նույն տեղում, 25. III. 1981։

11 «Актуальные вопросы современной идеологической борьбы», М., 1980, с. 135.

12 H. Kahn, On nuclear war, N. Y., 1962.

Բայց չէ՞ որ դա նշանակում է ուղղակի խաբել ժողովուրդներին։ Չէ՞ որ ըստ ամերիկյան հասկացողությունների, «սահմանափակ» միջուկային պատերազմը, ասենք, Եվրոպայում, հենց սկզբից կնշանակեր եվրոպական քաղաքակրթության անխուսափելի կործանում։ Հենց իրենք՝ Միացյալ Նահանգներն էլ, իհարկե, չէին կարող հեռու մնալ պատերազմի բոցից։ Պարզ է, որ նման պլաններն ու «դոկտրինները» լուրջ սպառնալիք են բոլոր ժողովուրդների համար. ներառյալ նաև ամերիկյան ժողովուրդը»[13]։

ՍՄԿԿ ակտիվ ու նպատակամղված պայքարը միջազգային լարվածության մեղմացման, կայուն, դեմոկրատական խաղաղության, ժողովուրդների միջև փոխշահավետ համագործակցության համար վերջին հաշվով նպատակ է հետապնդում ձևավորել միջազգային հարաբերությունների մի նոր համակարգ, որն ընդմիշտ բացառելով պատերազմը մարդկանց կյանքից, կհամապատասխանի արդի՝ կապիտալիզմից սոցիալիզմին անցման դարաշրջանի բովանդակությանը, նրա գլխավոր շարժիչ ուժերի, սոցիալական առաջընթացի շահերին, ապահովելով այդպիսով մարդու գլխավոր իրավունքը՝ խաղաղ կյանքի իրավունքը։ «Պաշտպանելով խաղաղությունը,— նշեց Լ. Ի. Բրեժնևը ՍՄԿԿ XXVI համագումարում,— մենք աշխատում ենք... գալիք տասնյակ սերունդների երջանկության համար...»։

Ոչ թե պատերազմի նախապատրաստություն, որը ժողովուրդներին դատապարտում է իրենց նյութական ու հոգևոր հարստությունների անմիտ վատնման, այլ խաղաղության ամրապնդում՝ ահա վաղվա օրվա ուղեցույց թելը»[14]։

Խաղաղության պրոբլեմի լուծման ողջ բարդությունը պայմանավորված է նրանով, որ երկրագնդի մի զգալի մասի վրա դեռևս գոյություն ունի կապիտալիզմը, որի էությանը ներհատուկ են ճնշումն ու ագրեսիան։ Ապրելով ներքին խոր ճգնաժամ, այն մոբիլիզացրել է իր ռազմատնտեսական, քաղաքական, դաղափարախոսական ողջ հնարավորությունները, որպեսզի դիմագրավի սոցիալիզմին։ Վերջինիս ուժն ու կայունությունը, մարդկության ապագայի նկատմամբ պատասխանատվության մեծ զգացումն են, որ խոչընդոտ են հանդիսանում իմպերիալիստական ագրեսիվ պրովոկացիաների համար։ Այդ պրովոկացիաները հետպատերազմյան ժամանակաշրջանում մեկ անգամ չէ, որ կարող էին հանգեցնել ջերմամիջուկային աղետի։ Միայն 1946—1976 թթ. Ամերիկայի Միացյալ Նահանգների զինված ուժերը 215 անգամ բերվել են մարտական պատրաստականության դրության, որպեսզի պաշտպանեն իմպերիալիզմի քաղաքական նկրտումները։ 19 անգամ նրանք ուղղակիորեն սպառնացել են կիրառել ստրատեգիական միջուկային զենք, որից 4 անգամ՝ Սովետական Միության դեմ[15]։

Միջազգային լարվածության նկատելի աճի ներկա պայմաններում ՍՄԿԿ XXVI համագումարը հանդես եկավ խաղաղասիրական նոր, կոնկրետ առա-

---

13 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, էջ 33—34։

14 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, էջ 50—51։

15 «За рубежом», 1978, № 51, с. 5.

ջարկություններով, որոնք կուսակցության XXIV և XXV համագումարների հռչակած խաղաղության ծրագրի օրգանական շարունակությունն են։ Այդ առաջարկությունները լայնորեն լուսաբանվել են մեր և արտասահմանյան մամուլում և արժանացել միջազգային դեմոկրատական հասարակայնության հավանությանն ու պաշտպանությանը։

Կուսակցությունը գաղափարախոսական ճակատի աշխատողների խնդիրն է համարում ըստ ամենայնի պրոպագանդել ՍՄԿԿ արտաքին խաղաղասիրական քաղաքականությունը, կուսակցության XXVI համագումարի համապատասխան որոշումները, մերկացնել իմպերիալիստական գաղափարախոսությունը, որը պատերազմի գաղափարախոսություն է։

Արդի գաղափարախոսական պայքարի կարևորագույն պրոբլեմներից է ազգային-ազատագրական շարժումների ու իմպերիալիզմի լծից ազատագրված երկրների զարգացման ուղիների պրոբլեմը։ Բանն այն է, որ վերջին 10—15 տարիների ընթացքում այդ երկրներում ձևավորվել է նոր խոշոր քաղաքական ուժ՝ հեղափոխական-դեմոկրատական կառավարող կուսակցություններ, որոնք, հարելով գիտական սոցիալիզմին, հանդես են գալիս որպես ՍՄԿԿ, միջազգային կոմունիստական շարժման բնական դաշնակիցներ։ Վերջիններս լայն ինտերնացիոնալիստական աջակցություն են ցույց տալիս այդ կուսակցություններին։

ՍՄԿԿ XXVI համագումարը բարձր գնահատեց սոցիալիստական կողմնորոշում ունեցող երկրների դերը միջազգային քաղաքականության մեջ, տվեց դրանց սոցիալ-քաղաքական զարգացման գլխավոր միտումների մարքս-լենինյան բնորոշումը։ «Առաջադիմական ուղիով այդ երկրների զարգացումը,— նշեց Լ. Ի. Բրեժնևը,— իհարկե, տեղի է ունենում ոչ միատեսակ, այն ընթանում է բարդ պայմաններում։ Բայց հիմնական ուղղությունները նման են։ Դա իմպերիալիստական մոնոպոլիաների, տեղական խոշոր բուրժուազիայի և ֆեոդալների դիրքերի աստիճանական վերացումն է, օտարերկրյա կապիտալի գործունեության սահմանափակումը։ Դա էկոնոմիկայի մեջ ժողովրդական պետության հրամանատարական բարձունքների ապահովումն է և անցումը դեպի արտադրողական ուժերի պլանային զարգացումը, դյուղում կոոպերատիվ շարժման խրախուսումը։ Դա հասարակական կյանքում աշխատավոր մասսաների դերի բարձրացումն է, պետական ապարատի աստիճանական ամրապնդումը ժողովրդին նվիրված ազգային կադրերով։ Դա այդ երկրների արտաքին քաղաքականության հակաիմպերիալիստական բնույթն է։ Նրանցում ամրապնդվում են հեղափոխական կուսակցությունները, որոնք արտահայտում են աշխատավորների լայն մասսաների շահերը»[16]։

Անտեսելով նշված պրոցեսների օբյեկտիվ բնույթը, փորձելով քողարկել այդ երկրների բնական հարստությունները տնօրինելու, ստրատեգիական նպատակներով դրանց տարածքներն օգտագործելու ձգտումը, իմպերիալիստական պրոպագանդան աշխատում է վարկաբեկել ազգային-ազատագրական շարժումները՝ դրանով իսկ հող նախապատրաստելով հակահեղափոխության արտահանման նկրտումների համար։

---

16 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, էջ 17—18։

Համագումարին ներկա գտնվող 36 հեղափոխական-դեմոկրատական աղգային-ազատագրական շարժումների պատվիրակությունների ներկայացուցիչներն իրենց ելույթներում վճռական հակահարված տվեցին իմպերիալիստական այդ փորձերին։

ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումների լույսի տակ ժամանակակից գաղափարախոսական պայքարի մյուս առանցքային պրոբլեմը վերաբերում է մեր երկրի տնտեսական զարգացման հարցերին։ Սոցիալիզմի հակառակորդների գաղափարախոսական գիվերսիաների մեջ վերջիններս հատուկ տեղ են գրավում, քանի որ բուրժուական գաղափարախոսությունն ու պրոպագանդան «սովետական սպառնալիքի» մասին առասպելի կողքին ուռճացնում էին նաև սովետական էկոնոմիկայի «դժվարությունների» վերաբերյալ առասպելը՝ վերջինս սերտորեն կապելով գիտատեխնիկական հեղափոխության սոցիալ-տնտեսական կողմերի հետ։ Այլ կերպ ասած, խոսքը բուրժուական զանազան «սովետաբաններից» ու «փորձագետների» կողմից մեր երկրի տնտեսական զարգացման պրոբլեմների յուրովի, աղավաղված մեկնաբանման մասին է։ Հենց այդ դիրքերից են նրանք դիտում ու ներկայացնում մեր տնտեսական աճի տեմպերի ու համամասնությունների, աշխատանքային ռեսուրսների, կապիտալ ներդրումների, բնական ռեսուրսների արդյունավետ մշակման, շրջակա միջավայրի պահպանության, զարգացման էքստենսիվ ուղիներից ինտենսիվին անցման պրոբլեմները, պրոբլեմներ, որոնց լուծման ուղիները գործարար կերպով և գիտականորեն քննարկվեցին ՍՄԿԿ XXVI համագումարում։ ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1981—1985 թվականների և մինչև 1990 թվականն ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունները մշակելով՝ կուսակցությունը նպատակ է դրել իրագործել իր պատմական մասշտաբներով ու նշանակությամբ վիթխարի մի ծրագիր։ «Մեր ժողովրդական տնտեսությունը ինտենսիվ զարգացման ռելսերի վրա փոխադրելու պրոցեսը,— համագումարում իր զեկուցման մեջ նշեց ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ա. Տիխոնովը,— իր պատմական մասշտաբներով, նշանակությամբ ու հետևանքներով իրավամբ կարող է հավասարեցվել այնպիսի խոշորագույն վերափոխման, ինչպիսին էր սոցիալիստական ինդուստրացումը, որն արմատապես կերպարանափոխեց երկիրը»[17]։

Մեր գաղափարախոսական հակառակորդը, ելնելով պրակտիկ-քաղաքական ու պրոպագանդիստական իր նպատակներից, սոցիալիստական էկոնոմիկայի զարգացման շարժիչ ուժ հանդիսացող օբյեկտիվ հակասություններին տալիս է աղավաղված մեկնաբանություն։ Այդ են վկայում, մասնավորապես, հակակոմունիստների տեսական օրգաններից մեկում՝ «Կոմունիզմի պրոբլեմները» ամսագրում, վերջերս հրապարակված հոդվածները, որոնց հեղինակները սովետական էկոնոմիկայի հետագա զարգացումը հնարավոր են համարում նրա կապիտալիստական ռեֆորմացիայի հիման վրա[18]։ Բուրժուական գաղափարախոսներն ու պրոպագանդան երբեմն ճարպկորեն օգտագործում են այն հանգամանքը, որ մեր տնտեսագիտության մեջ զարգացած սոցիալիզմի տըն-

---

17 Ն. Ա. Տիխոնով. ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1981—1985 թվականների և մինչև 1990 թվականն ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունները, Երևան, 1981, էջ 19։

18 „Problems of Communism", 1981, March-April.

տեսական օրինաչափությունները, տնտեսական մեխանիզմի արդյունավետ գործառնության տեսական պրոբլեմները դեռևս բավարար չափով չեն ուսումնասիրված։ Այդ տեսական «վակուումը» յուրովի է օգտագործվում մեր գաղափարախոսական հակառակորդի կողմից։ Եվ պատահական չէ, որ, խոսելով մարքս-լենինյան տեսության հետագա ստեղծագործական զարգացման գործում մեր հասարակագետների խնդիրների մասին, Լ. Ի. Բրեժնևը կուսակցության XXVI համագումարում նշեց, որ «Իրենց լուծմանն սպասող շատ պրոբլեմներ են կուտակվել սոցիալիզմի քաղաքատնտեսության բնագավառում»[19]։ Այդ պրոբլեմները, անկասկած, ածի պրոբլեմներ են։ Չէ՞ որ դրանցից շատերը վկայում են հենց կապիտալիզմի նկատմամբ սոցիալիզմի պատմական առավելությունների մասին։

Ինչպես համոզիչ վկայում են ՍՄԿԿ XXVI համագումարի փաստաթղթերը, սոցիալիստական էկոնոմիկայի զարգացմանը բնորոշ է անընդհատ առաջընթացն ինչպես քանակական, այնպես էլ որակական առումներով[20]։ Իսկ եթե համագումարի որոշումների տեսանկյունից փորձենք ավելի լայն, սկզբունքային բնույթի հետևություններ անել ռեալ սոցիալիզմի սոցիալ-տնտեսական զարգացման հարցերի շուրջ գաղափարախոսական պայքարից, ապա, ըստ երևույթին, նպատակահարմար կլիներ ավելի մեծ ուշադրություն դարձնել սոցիալիստական էկոնոմիկայի սոցիալական արդյունավետության հարցերի վրա՝ ելնելով մեր ժողովրդական տնտեսության կառուցվածքում կատարվող այն էական տեղաշարժերից, որոնք, լինելով արտադրողական ուժերի զարգացման հիմնական գործոններից մեկը, զգալի չափով պայմանավորում են հասարակական արտադրության սոցիալական արդյունավետությունը։ Ի միջի այլոց, հարցի հենց այդ կողմը նկատի ուներ ամերիկյան բուրժուական հայտնի տնտեսագետ ու սոցիոլոգ Ջ. Գելբրայթը, որը, մանրամասն ուսումնասիրելով մեր հնգամյա պլանները, գրել է. «Դժվար չէ պլանավորել մի էկոնոմիկա, որը երաշխավորում է կենսամակարդակի բարձրացում հասարակության փոքրամասնության համար։ Դա արվել է ինչպես ֆեոդալական հասարակարգում, այնպես էլ, նույնիսկ, ռուսական կայսրության մեջ։ Դժվար չէ ստեղծել նաև ժողովրդի մեծամասնության համար բավարար կենսամակարդակ։ Պրոբլեմը ծագում է միայն այն ժամանակ, երբ դա պետք է անել բոլորի համար։ Այդ դեպքում պահանջմունքները հսկայական են։ Ես գտնում եմ, որ դա սովետական պլանավորող օրգանների գլխավոր նպատակն է, որ դրվել է օրակարգում»[21]։ Ջ. Գելբրայթի ասածը ինքնին մեզ համար արժեքավոր է նաև նրանով, որ շոշափում է գաղափարախոսական պայքարի կենտրոնում գտնվող չափազանց արդիական մեկ այլ՝ ապրելակերպի, կամ, ինչպես բուրժուական գաղափարախոսներն են անվանում, «կյանքի որակի» պրոբլեմը[22]։ Հարցի տերմինաբանական կողմը տվյալ դեպքում էական չէ։ Ընդ որում, խոսքը, փաստորեն, այդ հարցում սոցիալիզմի սկզբունքային առավելության մա-

---

19 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, էջ 130։

20 «Коммунист», 1981, № 5, с. 5—10.

21 «Комсомольская правда», 20.I.1976.

22 «Социалистический образ жизни и современная идеологическая борьба», М., 1976.

սին է (հատկանշական է, որ Ջ. Գելբրայթը «կյանքի որակի» բուրժուական կոնցեպցիայի առաջին մշակողներից է և ժամանակին հանդես էր գալիս որպես պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի ջատագով)։

Սոցիալիզմի արտադրողական ուժերի, սոցիալիստական էկոնոմիկայի սոցիալական արդյունավետության աճին զուգընթաց մարդու բազմակողմանի զարգացումը գնալով ավելի սերտորեն է կապվում նրա կենսապայմաններում, կենսագործունեության ձևերում պլանաչափ իրականացվող առաջադիմական տեղաշարժերի հետ։

ՍՄԿԿ XXVI համագումարը, ձևակերպելով առաջիկա տասնամյակում կուսակցության տնտեսական ստրատեգիան, նշեց, որ դրանով իսկ նոր հնարավորություններ կընձեռվեն ծրագրային սոցիալական խնդիրների, սոցիալիստական ապրելակերպի, նոր մարդու ձևավորման համար, կամրապնդվեն դրանց նյութական և հոգևոր հիմքերը։ «Զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում,— համագումարում նշեց Լ. Ի. Բրեժնևը,— ավարտվում է բոլոր հասարակական հարաբերությունների վերակառուցումը նոր կարգին ներքուստ բնորոշ կոլեկտիվիստական սկզբունքների հիման վրա։ Այդ վերակառուցումն ընդգրկում է թե նյութական, թե հոգևոր ոլորտը, մեր կյանքի ամբողջ կացութաձևը»[23]։

Ժամանակակից գաղափարախոսական պայքարի հարցերի մեջ կարևորագույն տեղ են զբաղեցնում նաև քաղաքական սիստեմի, պետության և իրավունքի, դեմոկրատիայի հարցերը։ Դրանց շուրջ պայքարը հատկապես սրվեց ՍՍՀՄ նոր սահմանադրության ընդունման կապակցությամբ, քանի որ «Սովետական հասարակության տնտեսական, սոցիալական ու հոգևոր կյանքում կատարված առավել էական փոփոխությունները, համաժողովրդական պետության խոր դեմոկրատիզմը խտացված արտահայտություն են գտել ՍՍՀՄ նոր սահմանադրության մեջ»[24]։

Բուրժուական սովետաբաններն ամեն կերպ ջանում են նսեմացնել զարգացած սոցիալիզմի հիմնական օրենքի պատմական նշանակությունը, սեպ խրել նրա ու ռեալ սոցիալիզմի իրականության միջև։ Նրանք կասկածի տակ են առնում նոր սահմանադրության ստեղծման պատմական նախադրյալները, պնդելով, թե իբր սովետական սոցիալիստական օրենսդրությունը կայուն չէ, հաճախ փոփոխվում է։ Այդ տեսանկյունից էլ այն համեմատվում է ամերիկյան սահմանադրության հետ, որը 200 տարվա պատմություն ունի[25]։ Բուրժուական գաղափարախոսներն այդպիսով անտեսում են հասարակական զարգացման պատմականության տարրական սկզբունքը, այն փաստը, որ զարգացած սոցիալիստական հասարակությանը համապատասխանում է ոչ թե պրոլետարիատի դիկտատուրան, այլ համաժողովրդական պետությունը, ժողովրդական զանգվածների լայն մասնակցությունը պետական ու հասարակական գործերին։ Բնական է, որ օրենքների բովանդակությունը պետք է

---

23 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, էջ 94։

24 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, էջ 105—106։

25 „New York Times Magazine", 12.XII.1977.

համապատասխանի տվյալ հասարակության զարգացման պատմականորեն նոր փուլի առանձնահատկություններին, հասարակական հարաբերությունների զարգացմանը։ Ինչպես նշեց Լ. Ի. Բրեժնևը ՍՄԿԿ XXVI համագումարում, սովետական օրենսդրության կատարելագործման, զարգացման աշխատանքը կշարունակվի[26]։

Սովետական հասարակության սոցիալ-քաղաքական զարգացման «քննադատության», քաղաքական սիստեմի զրպարտության հարցերում իմպերիալիստական գաղափարախոսությունը, ռեֆորմիզմն ու ռևիզիոնիզմը ցուցաբերում են դիրքորոշումների լիակատար միասնություն, մի հանգամանք, որ վկայում է դրանց սերտաճման մասին։

Մեր կուսակցությունը վճռականորեն մերժում է սոցիալիստական իրականությունն աղավաղող ռևիզիոնիստական ու ռեֆորմիստական «քննադատությունը», որը «ծառայություն է մատուցում իմպերիալիստական պրոպագանդային, դասակարգային հակառակորդին»[27]։

Սոցիալիզմի աշխարհի դեմ ուղղված գաղափարախոսական դիվերսիաները, «հոգեբանական պատերազմը», ոչ մի առնչություն չունեն գաղափարախոսական ազնիվ պայքարի հետ։ Դրանք կապիտալիստական հասարակարգի գաղափարաքաղաքական ճգնաժամի, բուրժուական գաղափարախոսության տեսական սնանկության արդյունքն են։ Այդ գաղափարախոսությունն այլևս ի վիճակի չէ առաջադրելու կոնստրուկտիվ գաղափարներ, իդեալներ, նրա համար գնալով ավելի ու ավելի դժվար է դառնում հանդես գալ որպես մարքս-լենինյան ուսմունքի տեսական այլընտրանք։ Վերջինիս խոսուն վկայությունն են բուրժուական տեսաբանների վերջին տարիների կրվածքները, որոնց համար բնորոշ է ճգնաժամային թեմատիկան։ Դրանցից են, օրինակ, Օ. Թոֆլերի «Սպազմատիկ էկոնոմիկան», Մ. Հարինգթոնի «Կապիտալիզմի աղջամուղջը», Ռ. Հեյլբրոնների «Բիզնեսի քաղաքակրթության անկումը», Դ. Բելի «Կապիտալիզմի մշակութային հակասությունները», Ռ. Արոնի «Ի պաշտպանություն դեգրադացիայի ենթարկվող Եվրոպայի» և այլն։

Պատմական ճշմարտությունը մարքսիզմ-լենինիզմի, սոցիալիզմի կողմն է։ ՍՄԿԿ-ն գաղափարախոսական ճակատի աշխատողների պարտքն է համարում հարձակողական դիրքերից ժամանակին և արժանի հակահարված տալ իմպերիալիզմի ու նրա կամակատարների գաղափարախոսական դիվերսիաներին, ժողովրդական զանգվածներին հասցնել ճշմարտությունը սոցիալիզմի մասին։

---

26 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, էջ 106։

27 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, էջ 27։

XXVI СЪЕЗД КПСС И ПРОБЛЕМЫ ИДЕОЛОГИЧЕСКОЙ БОРЬБЫ

БАГРАТ ГАРИБДЖАНЯН

Резюме

Воспитание нового человека, утверждение социалистической идеологии в сознании трудящихся происходит в непрерывной борьбе с противостоящей ей буржуазной идеологией, империалистической пропагандой. Эта борьба, как указывалось в Отчетном докладе ЦК КПСС XXVI съезду партии, в последние годы заметно обострилась. Используя методы «психологической войны»—идеологические диверсии, клевету, империалистическая пропаганда стремится формировать у людей ложные стереотипы о социально-экономической и политической системе реального социализма, помешать социалистической идеологии нести трудящимся правду о социализме.

XXVI съезд КПСС поставил перед работниками идеологического фронта задачу развивать боевой наступательный характер нашей идеологии, соединить ее глубокую научность с партийной страстностью пропаганды и агитации.